ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

«Իզվեստիան» հրապարակել է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին»: Հրամանագիրը մեկնաբանում է իրավաբանական գիտությունների դոկտոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի աշխատակից **Մ. Պիսկոտինը:**

— ՍՍՀՄ սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն, միութենական հանրապետության տարածքը առանց նրա համաձայնության չի կարող փոփոխվել: Միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոխվել համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ, որը ենթակա է ՍՍՀ Միության հաստատմանը: Այդպիսի համաձայնությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև ձեռք չբերվեց: Առաջացավ կոնֆլիկտ, որը արդեն մոտ մեկ տարի տենդի մեջ է պահում երկու հանրապետությունն էլ: Թերություններ ի հայտ բերվեցին նաև գործող սահմանադրական օրենսդրության մեջ, որը նման կոնֆլիկտների լուծման անհրաժեշտ մեխանիզմներ չի նախատեսում: Հարկավոր է ենթադրել, որ այդ թերությունները կվերացվեն քաղաքական համակարգի ընկալված ռեֆորմի ընթացքում և համապատասխան արտացոլում կգտնեն ՍՍՀՄ սահմանադրության մեջ: Նրանում կարևոր է հետևողականորեն վավերագրել ազգամիջյան հարաբերությունների բոլոր վիճելի հարցերի հետևողականորեն դեմոկրատական արարողակարգերը:

— ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը արդյոք չի՞ հակասում սահմանադրությանը, դեմոկրատացման պրոցեսին: Այդ պրոցեսն այսօր, համաձայնեցեք, օրախնդիր է, ինչպես երբեք:

— ՍՍՀՄ Գերագույն սովետի վերջին նստաշրջանում, ինչպես հայտնի է, ընդունվեց ՍՍՀՄ օրենք ՍՍՀՄ սահմանադրության փոփոխությունների ու լրացումների մասին: Նրանում հենց ճշգրտվեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության լիազորությունները: Մասնավորապես, նրան իրավունք վերապահվեց ՍՍՀՄ պաշտպանության շահերից և նրա քաղաքացիների անվտանգությունից՝ ելնելով արտակարգ դրություն մտցնել առանձին վայրերում՝ տվյալ հարցը համապատասխան միութենական հանրապետության Գերագույն սովետի նախագահության հետ անպայման քննարկելով հանդերձ, ինչպես նաև նշված դեպքերում սահմանել կառավարման հատուկ ձևեր, որը պետք է իրականացվի ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների պետական մարմինների կողմից: Սրանք են ընդունված հրամանագրի իրավաբանական հիմունքները:

Ինչ վերաբերում է դեմոկրատիային, ապա հրամանագիրը հենց կոչված է պաշտպանել այն, ԼՂԻՄ-ի բնակչությանը պատսպարել նրանց ոտնձգություններից, ում ձեռնտու են ազգամիջյան երկպառակությունները: Լեռնային Ղարաբաղում մտցվող կառավարման հատուկ ձևը արտակարգ ու հարկադրական միջոցառում է: Դա թելադրված է այն բարդ ու պայթյունաշատ իրավիճակով, որ ծագել է ինչպես բուն ԼՂԻՄ-ում, այնպես էլ նրա շուրջ: Գաղտնիք չէ, որ այդ իրավիճակը գիտակցաբար և նպատակասլաց բորբոքում են նրանք, ում վերակառուցումը հաճելի չէ:

Հարկավոր է ասել, որ կառավարման այդպիսի ձևի սահմանումը, որը դադարեցնում է որոշ ընդհանուր սահմանադրական և այլ օրենսդրական նորմաների գործողությունը, համաշխարհային պրակտիկայում մի ինչ-որ արտասովոր բան չէ: Ժամանակավոր պրեզիդենտական կառավարման կարգը արդեն վաղուց է կիրառվել և կիրառվում մի քանի այլ երկրներում:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի կապակցությամբ, երբ իշխանության տեղական մարմինները արդեն ի վիճակի չեն վերահսկել այն, կառավարման հատուկ ձևի սահմանումը միակ հնարավորությունն է իրադրությունը կարգավորելու, այն կույր հույզերի գերությունից ազատելու և գլխավորը՝ քաղաքացիների շահերը պաշտպանելու, անարխիայի ու կամայականության մոլեգնում թույլ չտալու համար: Բայց, իհարկե, այն չի վերացնում ծագած կոնֆլիկտի վերջնական հաղթահարման արդյունավետ ուղիների որոնման ընդհանուր խնդիրը:

Ի. ԿՈՒԾՏԱՊԻՆ

«Իզվեստիա», 15 հունվարի 1989 թ.